



մասնագետի անկյուն

Բնական գազը՝ բնակարանում

Բնական գազը մեծ բարիք է մարդու համար, քանի որ այն ջերմություն է հարմարավետություն է բերում մեր տուն: Մակայն անգույշ օգտագործման դեպքում գազն ընկերոջից կարող է հեշտությամբ վերածվել թշնամու: Ըստ վիճակագրության, սեփական անվտանգության նկատմամբ հենց անփութ վերաբերմունքի հետևանքով են առավել հաճախ առաջանում արտակարգ իրավիճակները:

Բնակարանային գազի սարքավորումների անենամայա պլանային տեխսպասարկման ընթացքում բացահայտվում են գազի սարքավորումների՝ գեյզերների, գազօջախների, գազի վառարանների և գազի կաթսաների անօրինական փոխարինումների դեպքեր: Հատերն, արհամարհելով օրենսդրությանը սահմանված օրենքներն ու կանոնները, փորձում են ինքնուրույն փոխարինել գազի սարքավորումները՝ վտանգելով իրենց և սոսակայուն բնակվող մարդկանց կյանքը: Գազի սարքավորումների անօրինական փոխարինումը համարվում է կենցաղում գազի օգտագործման կանոնների, ինչպես նաև, բնակարանային ֆոնդի տեխնիկական շահագործման օրենքների և նորմերի խախտում, ինչը կարող է վթարային իրավիճակի հանգեցնել և սպառնալիք դառնալ քաղաքացիների կյանքի և առողջության համար: Կենցաղում գազի օգտագործման կանոններն արգելում են բնակչության ինքնուրույն փոխարինել, տեղափոխել և վերանորոգել գազի սարքավորումները: Գործող օրենսդրության համաձայն, կենցաղային գազի սարքավորումների պահպանման և անվտանգ շահագործման համար պատասխանատու են տան սեփականատերերն ու

դրանք օգտագործողները: Սակայն կան քաղաքացիներ, ովքեր չեն գնահատում սեփական կյանքն ու մոտակայքում բնակվող մարդկանց անվտանգությունն ու ինքնուրույն ներխուժում են տների և բնակարանների գազամատակարարման գործող համակարգի մեջ և փոխարինում են գազի սարքավորումները՝ այդ աշխատանքի մեջ ներգրավելով ցածր որակավորում ունեցող մասնագետներին և պատահական անձանց, ինչով մեծ վտանգի են ենթարկում բոլորիս կյանքը: Եղել են դեպքեր, երբ նման անձանց պատճառով, ովքեր, գազի սարքավորումը փոխարինելիս, գազատար խողովակը շփոթել են ջրատար խողովակի հետ, ջուրը հայտնվել է գազատար խողովակում: Դրա հետևանքով դաղարեցվում է տվյալ մուտքի, շենքի, իսկ հաճախ նաև շրջակա մի քանի շենքերի գազամատակարարումը: Բոլոր նրանք, ովքեր անօրինական փոխարինում են, տեղափոխում են կամ վերանորոգում են գազի սարքավորումները, ենթարկվում են վարչական կամ քրեական պատասխանատվության, կամ էլ զրկվում են գազամատակարարումից: Գազի սարքավորումներ օգտագործող բոլոր քաղաքացիները պետք է գիտակցեն, որ գազը մեծ վտանգի աղբյուր է, և դրա հետ կապված բոլոր գործողությունները պետք է կատարեն միայն այն մասնագետներն, ու, սահմանված կարգով, թույլատրվել է տեխպասարկման հետ կապված գործունեություն իրականացնել:

Գազի սարքավորումների օգտագործման կանոններին հետևելը գազը դարձնում է վառելիքի անվտանգ տեսակ և առօրյա կյանքում հուսալի օգնական: Միացված գազի սարքավորումները պետք չէ թողնել առանց հսկողության: Գազի սարքավորումներից արգելվում է օգտվել երեխաներին, ծեղերին և նրանց, ովքեր ծա-

նոթ չեն դրանք օգտագործման և տեղադրման կանոններին:

Գազօջախից օգտվելիս պետք է հիշել հետևյալը: Գազօջախի վրա թեյնիկ դնելուց հետո պետք է հետևել, որ եռացող ջուրը չթափվի կրակի վրա կամ քամին չհանգցնի այն: Լայն հատակ ունեցող սպասքը գազօջախին պետք է դնել երկար ոտքեր ունեցող հատուկ տակդիրի հետ՝ ածխածնի օքսիդից թունավորումը կանխելու համար: Դի կարելի ընել այն տարածքում, որտեղ տեղադրված է գազի սարքավորում: Արգելվում է գազատար խողովակների վրա պարաններ կապել և ծանրաբեռնել դրանք, չորացնել մազերն ու հագուստը գազօջախի վերևում, գազի սարքավորումների մոտ և դրանց վրա դուրսված իրեր դնել՝ թուղթ, կտորեղեն և այլն:

Նախքան այն գազի սարքավորումներից օգտվելը, որոնց այրման նյութերը դուրս են գալիս ծխնելույզով, պետք է ստուգել ծխնելույզի քաշողական ուժը: Այն ստուգում են սարքավորումը միացնելուց առաջ և հետո՝ տվյալ սարքավորման հրահանգավորմանը համապատասխան: Քաշողական ուժի բացակայության դեպքում արգելվում է միացնել գազի սարքավորումը: Դեռ վաղուց է նկատվել, որ ածխածնի օքսիդից թունավորումը տեղի է ունենում օդափոխության համակարգի վատ աշխատանքի պատճառով: Ածխածնի օքսիդի կոնցենտրացիան, որն օդում կազմում է ընդհանուր տարածքի ընդամենը 1%-ը, արդեն մահացու է համարվում մարդու համար:

Չնայած ավելի հաճախ են ողբերգական ավարտ ունեցող պատահարներ տեղի ունենում, քանի որ, տարածքում ջերմությունը պահպանելու համար, բնակիչները փակում են բոլոր պատուհաններն ու օդանցքերը, թուլացնում են ծխնելույզների քաշողական ուժը: Բացի դա, բնակարանը



ջեռուցելու համար մարդիկ հաճախ օգտագործում են գազօջախներն ու ջեռոցները: Սակայն քչերը գիտեն, որ գազի նման այրման դեպքում մեծ քանակությամբ թթվածին է այրվում, ինչի բացակայության դեպքում առաջանում է ածխածնի օքսիդ, որը մենք չնչում ենք: Ցավալի է, բայց նման դեպքերն ավելի ու ավելի հաճախակի են կրկնվում, սակայն մարդիկ հետևողականորեն չեն ցանկանում այլոց սխալներից դասեր քաղել և հասկանալ, որ նման աղետների մեծամասնության պատճառը գազի սարքավորումների շահագործման կանոններին չհետևելն է:

Գազն անվտանգ է միայն ճիշտ օգտագործելու դեպքում: Դետեք վերը նշված խորհուրդներին: Գազի սարքավորումների անվտանգ շահագործման հետ կապված հարցերով դիմեք միայն այն մասնագետներին, ու, սահմանված կարգով, թույլատրվել է բնակարանային գազի սարքավորումների տեխսպասարկում իրականացնել:

Մրան Չայրապետյան
AEG Service LLC-ի հանրության
հետ կապերի և տեղեկատվության
բաժին